Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԴԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԿՅԱՆՔՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

XVIII դ. սկզբին, Պյոտր Առաջինին հղած իր մի գրությունում հայ ազատագրական շարժման նշանավոր գործիչ Իսրայել Օրին հայանում էր. «Զեմ կասկածում, հայանի է, Ձերդ մեծության, որ ժամանակին Հայաստանում եղել են թագավոր և քրիստոնյա իշխաններ: Այնց անմիարանության պատճառով ամբողջ Հայաստանի թագավորությունն ընկավ հեթանոսների իշխանության տակ: Երկու հարյուր և հիսուն տարուց ավելի է, որ քրիստոնյա ամբողջ այդ աշխարհը հնում է անհավատների լծի տակ: Ինչպես Ադամի որդիները հույսով սպասում են Մեսիայի գալուստին, որը պիտի ազատի նրանց հավերժական կորստից, այնպես էլ թշվառ այդ ժողովուրդն է ապրել և հիմա իսկ ապրում է Ձերդ մեծության ձեռնավորության և օժանդակության հույսով: Այդպես նախագուշակել են մարգարեները, թե ժամանակներ հետո անհավատները խիստ պիտի դաժանանան և հարկադրեն քրիստոնյաներին ընդունել իրենց վատթար օրենքը, և ահա այդ ժամանակ մոսկովյան օգոստափառ տնից պիտի գա մեծ մի իշխան, ավելի բաջարի, քան Ալեքսանդր Մեծը (իմա՝ Ալեքսանդր Մակեդոնացին — Ն. Ա.), պիտի իր ձեռքը վերցնի Հայաստանի թագավորությունը և վերականգնի քրիստոնյաների ազատությունը: Այս մարգարեությանը մինչև հիմա հավատացել և հիմա իսկ հավատում են ստուգապես...»[1]:

Օրին հայ քաղաքական մտքի պատմության մեջ ականավոր այն գործիչն էր, որ, երկար դեգերումներից հետո, բացառապես Ռուսաստանում որոնեց հայ ժողովրդի ազատագրական տենչերի իրագործողին: Իսրայել Օրին կամենում էր հավատացնել Պյոտր Առաջինին, թե XV դ. ի վեր հայերի ազատագրման ակնկալությունները կոդմնորոշված են եղել դեպի ռուսական պետությունը և XVIII դարասկզբի ռուս ցարն է այն փրկիչը, որ պիտի իրագործի հայ ժողովրդի վաղեմի ձգտումը: Իսրայել Օրին լծորդում էր «անհավատների» տիրապետության սկիզբը XV դ. կեսերին գոյատևած Այուբյաց իշխանության վերջին շառավիղների հավակնությանց խորտակման հետ[2]:

Հայ ազատագրական շարժման գործիչներն այն համոզմունքն ունեին արդեն, որ միայն Ռուսաստանն է այն իրական ուժը, որի օգնությամբ քաղաքականապես ըկկտված հայ ժողովուրդը կարող էր թոթափել օտարատիրության լուծը: Հարկավ, ֆեոդալական-ճորտատիրական հարաբերություններ էին իշխում նաև Ռուսաստանում, բայց, այստեղ, ի տարբերութ-

---

[1] Г. А. Э з о в. Сношения Петра Великого с армянским народом. СПб., 1898, д. 35. *Տե՛ս նաև՝ Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության. գիրք I, Երևան, 1957, էջ 13:*

[2] *Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ.:*

յուն Արևելքի մահմեդական աշխարհի, ֆեոդալիզմի ընդերքում գարգանում էին նոր արտադրողական ուժեր, որոնք նախապայման էին նոր արտադրահարաբերությունների առաջացման ու զարգացման համար: Արդեն այդ պահին Ռուսաստանն իր բարեկրթական մակարդակով անհամեմատ բարձր էր մահմեդական աշխարհից: Նա պատռում էր միջնադարյան սահմանափակության վարագույրը և անհրաժեշտ նախադրյալներ էր ստեղծում ռուսական ազգային մշակույթի, գիտության ու դրականության զարգացման համար: Այդ ճանապարհին դյուրին չէ դերագնահատել Պետր Առաջինի համառ ջանքերով 1703 թ. Սանկտ Պետերբուրգի հիմնադրումը, քաղաք, որն ազդարարում էր, թե հրապարակ է իջնում կայսրության ձգտող ռուսական հզոր պետությունը: Պետր Առաջինը 1712 թ. Պետերբուրգը դարձրեց մայրաքաղաք, իսկ 1721 թ. իրեն կայսր հռչակեց: Հյուսիսային պատերազմում Շվեդիային պարտության մատնելուց հետո, Ռուսաստանն իր ռազմական հզորությամբ ձեռք էր բերել միջազգային լայն ճանաչում: Առավել քան թվում էր, որ Ռուսաստանը կիրագործի նաև դեպի հարավ առաջխաղացման իր ծրագիրը: Բայց Պետր Մեծի մահից հետո, տևական մի ժամանակաշրջան, ներքին և միջազգային անբարենպաստ գործոնների պատճառով, Ռուսաստանը չկարողացավ իրականացնել դեպի Անդրկովկաս առաջխաղացման իր մշակած պլանների իրացումը. հետևաբար և անկատար էին մնում հայ ազատագրական ակնկալությունները: Սակայն ռուսական իշխանությունները հայ գաղթականության նկատմամբ հենց Պետր Մեծից սկսած ցուցաբերում են շատ բարյացակամ վերաբերմունք: Այս իրողությունը բացատրվում էր երկու պատճառով: Նախ՝ նրանք չեն ցանկանում, որ խախտվի հայ ժողովրդի հավատը Ռուսաստանի նկատմամբ որպես հովանավորող պետության, և երկրորդ՝ նկատի է առնվում հայ բնակչության օգտակարությունը Ռուսաստանի առևտրի և արհեստագործության առաջընթացի ապահովման գործում:

Հայ գաղթականության զանգվածային աննախընթաց հոսքը Ռուսաստան տեղի է ունենում XVIII դ. 30–40-ական թվականներին: Դրա գլխավոր պատճառն այն էր, որ Ռուսաստանից սպասվող օգնությունը չստացվեց, և այդ թվականներին Սյունիքում և Արցախում ծավալված ազատագրական շարժումները ճնշվեցին, որից հետո բազում հայ ընտանիքներ հարկադրված եղան թողնել հայրենի երկիրը և ապաստան փնտրել Ռուսաստանում: 1722–1723 թթ. Պարսկական անհաջող արշավանքից հետո Պետր Առաջինը 1723 թ. հատուկ հրովարտակով թույլ է տալիս հայերին գալ և բնակվել ռուսական պետության հարավային տարածքներում: Դեպի Ռուսաստան հայերի ներգաղթին բարենպաստող քաղաքականությունը շարունակեցին Պետր Մեծի հաջորդները: Ուշագրավ է, որ տակավին Պետերբուրգի հիմնադրումից ընդամենը յոթ տարի անց, 1710 թ., այստեղ հիմնվում է փոքրաթիվ հայ գաղութ: Պետերբուրգի հայ գաղթօջախի առաջին ներկայացուցիչները գլխավորապես առևտրականներ և արդյունաբերողներ են եղել: Հիշատակվում են նաև առանձին հայ ծառայողներ և զինվորականներ: Պետերբուրգի 1720–1730-ական թվականների հայ գաղթօջախի բնակչության թիվը չնայած մեզ հայանի չէ, բայց այն փաստը, որ 1730 թ. քաղաքն ունեցել է իր ծխատեր քահանան (Հովհաննես Շե-

բիսանով), վկայում է ձեռագրված հայ համայնքի գոյությունը: XVIII դ. 30-ական թվականներին Պետերբուրգում գոյություն է ունեցել «Հայկական փողոց»: Մեզ է հասել մի ձեռագիր, որն ընդօրինակվել է 1738 թ. Հովհաննես քահանայի կողմից. «Ի արքայանիստ քաղաքն Սանկտ Պետրոս Բուրխ»[1]: Հայտնի է, որ XVIII դ. վերջում Պետերբուրգում ապրել է շուրջ հարյուր հայ ընտանիք: Նախապես հայերը կենտրոնացված էին Վասիլևյան կղզում: Շատ հայ վաճառականներ և արդյունաբերողներ քաղաքում հիմնում են առևտրական գրասենյակներ, գործարաններ և ֆաբրիկաներ: 1758 թ. Նորջուղայեցի Խաչատրյան եղբայրները Պետերբուրգում հիմնում են Ռուսաստանում առաջին փայատիրական ընկերություններից մեկը՝ Պարսկաստանի հետ առևտրի ընդլայնման համար: XVIII դ. կեսին մետաքսագործական ֆաբրիկաներ հիմնեցին Աբրահամ Մանուկովը, Բոգդան Ավվերդովը և Պետրոս Շիրվանովը: XVIII դ. 60-ական թվականների սկզբին առևտրական գրասենյակ է հիմնում Հովհաննես Լազարյանը, որի ջանքերով 1770 թ. կառուցվում է Ս. Կատարինե հայկական եկեղեցին (Յու. Յեկատենի ճարտարապետությամբ)[2], իսկ 1791 թ.՝ հայկական գերեզմանատան Ս. Հարություն եկեղեցին: 1779 թ. ստեղծվում է Պետերբուրգի և Մոսկվայի հայկական եկեղեցիների միացյալ հոգաբարձությունը:

Ս. Պետերբուրգի հայ գաղթօջախի առաջին ամենախոշոր երևույթը Գրիգոր Խալդարյանի 1781 թ. հիմնադրած տպարանի գործունեությունն է: Խալդարյանը հնդկահայ էր, երկար ժամանակ ապրել էր Լոնդոնում և իր տպարանը կազմակերպել այնտեղ, սակայն շուտով համոզվում է, որ հայ իրականությունից և շրջապատից կտրված չի կարող գործունեություն ծավալել, ուստի տպարանը փոխադրում է հայ գաղթօջախ ունեցող Ռուսաստանի մայրաքաղաքը: Խալդարյանի տպագրական գործը քաջալերել և օգնություն են ցույց տվել Պետերբուրգի հայերը: Նրա ձեռնարկը մեծ չափով հովանավորել են մասնավորապես Ռուսաստանի հայկական թեմի առաջնորդ Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և 1760-ական թվականների սկզբին Պետերբուրգում իր առևտրական գրասենյակը հիմնած և 1764 թ. պապական ոսկերիչ նշանակված Հովհաննես Լազարյանը: Խալդարյանի տպարանը Պետերբուրգում գործել է 1781–1790 թթ.: Հրատարակել է 14 անուն գիրք, որոնցից առանձնապես կարևոր են «Տետրակ այբբենարան» (Ռուսաստանում տպագրված առաջին հայերեն գիրքը), Ներսես Շնորհալու «Հիսուս որդի», Եղիշեի «Գիրք որ կոչի Եղիշէ պատմագիրք», Խալդարյանի «Գիրք որ կոչի շաւիղ լեզվագիտութեան», Կ. Սարաֆյանի «Գիրք որ կոչի բանալի գիտութեան» ձեռնարկը և այլն:

Հայ ազատագրական շարժման ռուսահայ նշանավոր գործիչները (Արղության և Լազարյան) Պետերբուրգում էին բանակցություններ վարում ռուսական արքունիքի հետ Հայաստանի ազատագրման և նրա ապագա քաղաքական կացության հարցերի վերաբերյալ, այստեղ էին նրանք մշակում հայ-ռուսական դաշնակցային պայմանագրի տեքստը: Մեծ աշխատանք էր տարվում նաև հայոց անցյալը, երկրեղկված Հայաստանի ներ-

---

[1] Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան. ձեռագիր 3807, թ. 15բ:

[2] Հ ր ա չ յ ա Ա ճ ա ռ յ ա ն. Հայ գաղթականության պատմությունը. Երևան, 2002, էջ 100:

կան ռուս հասարակայնությանը և կառավարող շրջաններին ներկայացնելու նպատակով: Ռուսական զինվորական ծառայության մեջ գտնվող Վառլամ Վահանովը թարգմանում է Մովսես Խորենացու հայտնի ողբը "Плач об Армении" վերտառությամբ և հրատարակում 1786 թ.: Պետերբուրգում նույն թվականին հրատարակվում է «Նոր տետրակ, որ կոչի հորդորակ» երկը, որը ձոնվում է իշխան Գ. Ա. Պոտյոմկինին: Ուշագրավն այն է, որ ինչպես թարգմանությունների ընտրության, այնպես էլ հրատարակությունների նպատակը Հայաստանի կացության վերաբերյալ ճշմարտապատում պատկերացում ստեղծելն էր, ռուս կառավարական շրջաններին հայ ժողովրդի բաղձանքներին հաղորդակցելը և Հայաստանի ազատագրության ուղղությամբ անհրաժեշտ ռազմական և քաղաքական աջակցության և օգնության կազմակերպումը[5]:

Հովհաննես Լազարյանի հանձնարարությամբ 1799 թ. Պետերբուրգում Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանյան Արարատցու կողմից կազմվեց ապագա Լազարյան ճեմարանի կանոնադրության առաջին նախագիծը, որով ուրվագծվում էր այն խոշոր դերը, որ պիտի խաղար Մոսկվայի Լազարյան ճեմարանը հայկական կրթամշակութային զարգացման ասպարեզում[6]:

Ավելի մոտ կանգնած լինելով կայսրության կառավարական շրջաններին, Պետերբուրգի հայկական գաղթօջախի գործիչները խոշոր դեր են խաղացել նաև Ռուսաստանի այլ գաղթավայրերի ամենօրյա խնդիրներին ցանկալի ընթացք տալու ուղղությամբ: Այս առումով կարևոր դեր կատարեցին Հովհաննես Լազարյանը և Հովսեփ Արղությանը: Սրանց ջանքերով և միջնորդությամբ է, որ XVIII դ. վերջում վերահաստատվեցին նախորդ կայսրերի կողմից Ռուսաստանի հայությանը տրված առանձնաշնորհումները և արտոնությունները[7]:

Պետերբուրգում գրահրատարակչական գործը ավելի լայն թափ ստացավ XIX դ. սկզբից: 1810 թ. «Մորսկայա տիպոգրաֆիա» տպարանում աստրախանցի մշակութային գործիչ և տպագրիչ Հ. Հովհաննիսյանը լույս է ընծայում Գր. Նարեկացու աղոթքը պարունակող գրքույկ («Մաղթանք գիշերայինք»): Նա նույն թվականին հիմնում է իր սեփական տպարանը և մինչև 1827 թ. տպագրում է 10-ից ավելի հայերեն գրքեր, այդ թվում «Քարոզք Նորին կայսերական մեծության...» (հայերեն և ռուսերեն), Աստվածաշունչը և այլն:

1828 թ. Լազարյան ճեմարանը Պետերբուրգում բացում է իր տպարանը, որտեղ լույս են ընծայվում պաշտոնական վավերագրեր (ռուսերեն և հայերեն), ինչպես «Արձանագրութիւնք, որ վերաբերին առ հաստատութիւն հաշտութեանն ընդ Պարսկաստանի» (1828), «Գումար բարձրագոյն հրովարտակաց...» (1839) և այլն: Պետերբուրգում 1838-ից գործել է Ալ. Խուդաբաշյանի տպարանը, որը նույն թվականին հրատարակել է տպարանատիրոջ «Բառարան ի հայկական լեզուէ ի ռուսաց բարբառ» երկհատոր աշխատանքը, 1839-ին նրա գրադարանի գրացուցակը «Ցանկ տպագրեալ և ձեռագիր գրոց...»: 1860-ական թվականներին Պետերբուրգում գործել է

---

[5] Հայ ժողովրդի պատմություն. հ. IV, Երևան, 1972, էջ 430–431:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

Ռափայել Պատկանյանի տպարանը, որը, ի Թիվս այլոց, 1863–1864 թթ. տպագրել է «Հյուսիս» հանդեսը:

XIX դ. երկրորդ կեսին և հետագայում Պետերբուրգում հայերեն գրքերը հիմնականում հրատարակվել են տեղի տարբեր տպարաններում, այդ թվում՝ Գիտությունների ակադեմիայի, Բոկոտիի, Գոլովինի, Սկորոխոդովի, Լիբերմանի տպարաններում: Վերջին երկու տպարաններում հայերեն գրքերից բացի 1887–1898 թթ. տպագրվել է «Արաքս» հանդեսը: Այս հանդեսը վեցամսյա էր, խմբագիրն էր Սիմեոն Գուլամիրյանցը: Հանդեսն ունեցել է լիբերալ-բուրժուական ուղղություն: Տպագրել է Ռաֆֆու, Ռ. Պատկանյանի, Պ. Պռոշյանի, Ավ. Իսահակյանի, Նար-Դոսի, Ալ. Ծատուրյանի ստեղծագործությունները, թարգմանություններ ռուս և եվրոպական դասականներից: Տեսական և ճանաչողական հոդվածներ է տպագրել Հովհ. Այվազովսկու, Դ. Բաշինջաղյանի, Վ. Վերեշչագինի և այլ արվեստագետների մասին:

Բեղմնավոր է եղել մայրաքաղաքի «Պուշկինյան» հայկական տպարանը, որը 1890–1900-ական թվականներին լույս է ընծայել բժիշկ Ա. Բուդաղյանի բժշկական դիտահանրամատչելի մի շարք աշխատությունները, այլ գրքեր, ինչպես և «Բանբեր գրականության և արվեստի» (1903–1904), «Սափրիչ» (1906–1907) հանդեսները, «Արցունքներ» ժողովածուի համարները (1907): Պետերբուրգում 1867–1872 թթ. գործել է Մ. Միանսարյանցի հրատարակչությունը, որը տարբեր տպարաններում, հրատարակչի տպատառերով, լույս է ընծայել մանկավարժական բնույթի թարգմանական գրքեր և իր՝ Միանսարյանցի «Կանոնավոր և վայելուչ գրության պատմություն և տեսություն» (1872) խորագրով ձեռնարկը:

Պետերբուրգը արևելահայության մի քանի սերունդների համար ուսումնական և գիտական կենտրոնի դեր է կատարել: Տակավին XIX դ. 40-ական թվականների վերջերին Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետում բացվում է հայերենի բաժին: 1858 թ. ավարտելով Պետերբուրգի գլխավոր մանկավարժական ինստիտուտը, Քերովբե Պատկանյանը 1861-ից գլխավորել է մայրաքաղաքի համալսարանի արևելյան լեզուների ամբիոնը: Նա 1885 թ. ընտրվում է Ռուսաստանի ակադեմիայի թղթակից անդամ: Ք. Պատկանյանի շնորհիվ Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ամբիոնում հայ բանասիրությունը դառնում է համակողմանի ուսումնասիրության առարկա, ձևավորվում է հայագիտության պետերբուրգյան դպրոցը: 1872-ից վարելով նաև Պետերբուրգի գրաքննչական ատյանի հայ հրատարակությունների գրաքննչի պաշտոնը, Ք. Պատկանյանը շատ գրական դեր է խաղացել հայ մամուլի, գիտական և գեղարվեստական գրականության հրատարակման գործում: Ք. Պատկանյանը ուսումնասիրել, ռուսերեն թարգմանել և հրատարակել է Մովսես Կաղանկատվացու, Աբբեոսի, Ղևոնդ Երեցի, Մխիթար Այրիվանեցու, Թովմա Արծրունու և ուրիշների երկերը, Մովսես Խորենացուն վերագրվող Աշխարհացույցը (հայերեն բնագրով հանդերձ): Նա է հավաքել, ռուսերեն թարգմանել և հրատարակել հայ պատմիչների տեղեկությունները մոնղոլների մասին երկհատորյակը: «Սասանյան արքայատան պատմության փորձ ըստ հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների», «Դեպի

Հնդկաստանի ափերը Թգլատպալասարի կարծեցյալ արշավանքի մասին» և այլ ռուսերեն աշխատություններում Ք. Պատկանյանը ճշգրտել է Մերձավոր Արևելքի ժողովուրդների հին և միջնադարյան պատմության մի շարք սկզբունքային հարցեր:

Արգասաբեր է եղել Պետերբուրգի համալսարանի դերը հայոց մտավոր կյանքի առաջընթացի համար: Այն մեծ չափով նպաստել է հայագիտության զարդացմանը, կարևոր գեր կատարել XIX դ. հայ գրականության բազում մեծերի կյանքում: Գաբրիել Սունդուկյանի կյանքը ուշագրավ է ոչ միայն նրանով, որ հիմք դրեց հայ ռեալիստական դրամատուրգիային, այլև հանձին նրա ակնհայտ է ռուսական դրամատուրգիայի անմիջական ազդեցությունը հայ դրամատուրգիայի վրա: Սունդուկյանը Պետերբուրգի համալսարանում սովորելու տարիներին՝ 1846–1850 թթ., մոտիկից ուսումնասիրեց ռուս գրականությունը, դրամատուրգիան: Վերհիշելով իր ուսումնառության տարիները, Սունդուկյանը դրել է. «Հենց այն ժամանակ խորացավ և ամրապնդվեց իմ անսահման սերը դեպի թատրոնը, որին նվիրեցի իմ լավագույն տարիները, իմ հոգու մասնիկներ՝ իմ գրվածքները, իմ մտքերն ու զգացմունքները»: Բարձր գնահատելով իր կյանքում Գոգոլի ստեղծագործությունների խաղացած դերը, Սունդուկյանը խոստովանել է, որ Գոգոլի անվան հետ են կապված իր «լավագույն հիշողությունները», որ Գոգոլի անվանը ինքը շատ է պարտական՝ իր սիրով դեպի թատրոնը[8]: Նա խանդավառ հիացմունքով էր վերհիշում իր ժամանակի ռուսական բեմի նշանավոր վարպետների խաղը: «... Ինձ ապշեցնում էին,– գրել է Սունդուկյանը,– իրենց խաղով Մարտինովը, Կարատիգին 2–ը, Մոսկվայից եկող Շչեպկինը և շատ ուրիշներ: Շչեպկին–Ֆոմուսովը այժմ էլ իմ աչքի առաջ է, և ինձ թվում է, որ ես հիմա էլ լսում եմ նրա ձայնը, թեև այդ օրվանից անցել է ավելի քան 50 տարի»[9]: Գ. Սունդուկյանի ստեղծագործությունների թեմատիկան և գաղափարաբանությունը շատ մոտ էր ռուս ականավոր դրամատուրգ Ա. Օստրովսկուն: Թերևս այդ էր պատճառը, որ շատ գրականագետներ նրան կոչում էին «Հայկական Օստրովսկի»:

Արևելյան Հայաստանի տարածքների Ռուսաստանին միացման ավարտը խթանեց նաև հայ արվեստի զարգացմանը: Տակավին XIX դ. առաջին տասնամյակներից սկսվեցին գրի առնվել, մշակվել և հրատարակվել հայ ժողովրդական երգերը: Պետերբուրգում իրար հետևից լույս տեսան մի քանի երգարաններ՝ հայկական տեքստերով: Հատկապես հիշատակության արժանի է 1856 թ. հրատարակված «Ազգային երգարան հայոց» խորագիրը կրող ժողովածուն, որը կազմել էր Ռափայել Պատկանյանը: Սա առաջին հայերեն տպագիր երգարանն էր: 1868 թ. լույս տեսավ Մ. Միանսարյանցի կազմած «Քնար հայկական» նոր երգարանը: 1861 թ. «Իլլյուստրացիա» հանդեսում տպագրվեց հայ ժողովրդական երգերի մի ամբողջ շարք:

Հայ երաժիշտներին պրոֆեսիոնալ կրթություն տալու գործում անգնահատելի դեր խաղացին ռուսական երաժշտական ուսումնական հաստատությունները: Շատերն են իրենց կրթությունը ստացել Պետերբուրգի

---

[8] Գ. Սունդուկյան. Երկերի լիակատար ժողովածու. հ. 3, Երևան, 1952, էջ 482:

[9] Նույն տեղում: Տե՛ս նաև՝ Ю. Веселовский. Русское влияние в современной армянской литературе. М., 1909, с. 12–13.

կոնսերվատորիայում: Այստեղ են սովորել երգչուհի և մանկավարժ Վերգինե Արծրունին, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանը և Հարո Ստեփանյանը, դիրիժորներ՝ Ալ. Մելիք-Փաշաևը և Միքայել Թավրիզյանը, դաշնակահար, երաժիշտ-մանկավարժ Կոստանդին Ալիխանովը, երգիչ Շարա Տալյանը, ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Հայկանուշ Դանիելյանը, օպերային երգչուհի Նադեժդա Պապայանը, խմբավար Թաթուլ Ալթունյանը և շատ ուրիշներ:

Թիֆլիսաբնակ Ղորգանյանների ամբողջ ընտանիքը՝ Հովհաննես, Կոստանդին, Նունե, Հեղինե և Մարիա Ղորղանյանները, որոնք դարձան օպերային առաջնակարգ երգիչներ, ռուսական երաժշտական միջավայրի արդասիք էին: Պետերբուրգի կոնսերվատորիայում է 1877–1878 թթ. սովորել կոմպոզիտոր Գենարիոս Ղորղանյանը, իսկ աշխարհահռչակ երաժշտագետ Բարսեղ (Վասիլ) Կորդանովը (Ղորղանյանը), որն ավարտել է Պետերբուրգի ռազմաինժեներական ուսումնարանը, հետագայում դարձավ Մոսկվայի և Պետերբուրգի մամուլի խոշոր երաժշտական հանդեսների թղթակիցը, աշխարհահռչակ մեծ կոմպոզիտորների ստեղծագործությունների մասին ուսումնասիրությունների հեղինակ: Պետերբուրգի կոնսերվատորիայում է իր վոկալ կրթությունը ստացել տաղանդաշատ երգչուհի Մագդալինե Գյանջյանը, որը հետագայում աշխատեց Մարիինյան թատրոնում:

Պետերբուրգի կոնսերվատորիայում ձևավորվեցին խոհուն կոմպոզիտոր և դիրիժոր, մանկավարժ Մակար Եկմալյանի ստեղծագործական սկզբունքները: Նա աշակերտեց Ռիմսկի-Կորսակովին, ստեղծագործական սերտ կապերով կապված էր նաև Ռուբինշտեյնի, Լյադովի, Չայկովսկու և ժամանակի ռուս նշանավոր մյուս կոմպոզիտորների հետ: Հայ մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը Պետերբուրգի կոնսերվատորիայում աշակերտեց Գլազունովին ու Ռիմսկի-Կորսակովին: «Ես ինձ ռուսական այն դպրոցի շարքին եմ դասում,– գրել է Սպենդիարյանը,– որը ստեղծվել է Գլինկայի, Բալակիրևի, Բորոդինի, Ռիմսկի-Կորսակովի և ուրիշների կողմից: Այդ կոմպոզիտորների, ինչպես նաև Գլազունովի և Լյադովի ստեղծագործությունները ամենից շատ են համապատասխանել իմ ճաշակին»[10]:

Հայկական ռոմանսի մեծ վարպետ Ռոմանոս Մելիքյանը ևս ստեղծագործական հասունություն ապրեց և որպես տաղանդավոր կոմպոզիտոր ձևավորվեց Մոսկվայի և Պետերբուրգի կոնսերվատորիաներում:

Արևելյան Հայաստանի Ռուսաստանին միացմանը հաջորդեց ռուսական կերպարվեստի զարգացման ժամանակաշրջանը, որը նշանավորվեց աշխարհահռչակ Բրյուլովի, Իվանովի, Վենեցիանովի, Ֆեոդորովի և մյուս նշանավոր նկարիչների ստեղծագործություններով: Սրանց հաջորդում են ռուս «պերեդվիժնիկները», ապա նկարիչների նոր՝ Սուրիկովի և Ռեպինի սերունդը: Բոլորն էլ իրենց բարձր արվեստով նպաստեցին XIX դ. հայ կերպարվեստի զարգացման վրա: Հայ նկարիչների մի ամբողջ համաստեղություն կրթություն ստացավ Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիայում: Նրանք ռուս ականավոր նկարիչների հետ ստեղծագործական սերտ համագործակցություն հաստատելով, հասան բարձր վարպետության

---

[10] Ալ. Շահվերդյան. Հայ երաժշտության պատմության ակնարկներ. Երևան, 1959, էջ 246:

և իրենց հիմնարար ավանդը ներգրեցին հայ ազգային կերպարվեստի զարգացման գործում: Այդ նկարիչների սերնդին են պատկանում Հովհաննես Այվազովսկին, որը 1833–1837 թթ. սովորել է Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիայում, Ստեփանոս Ներսիսյանը, որը նույն ակադեմիան ավարտեց 1842 թ., Հակոբ Հովնաթանյանը, որին ակադեմիայի խորհուրդը 1841 թ. նկարչի կոչում շնորհեց, Աղաֆոն Հովնաթանյանը, որն աշակերտել է տաղանդավոր Բրյուլովին, Հովհաննես Քաթանյանը, որը 1852 թ. ավարտեց ակադեմիան ոսկե մեդալով և ուրիշներ:

XIX. դ. երկրորդ կեսին, հատկապես դարավերջին, ստեղծագործական լայն ասպարեզ իջավ Պետերբուրգի ուսումնական հաստատություններն ավարտած և ռուսական պրոֆեսիոնալ կերպարվեստի դպրոցի ավանդույթներով և վարպետությամբ կոփված հայ նկարիչների մի նոր սերունդ: Այդ սերնդի ականավոր ներկայացուցիչներից էին Գևորգ Բաշինջաղյանը, որը Պետերբուրգի Գեղարվեստների ակադեմիան ավարտել է 1883 թ., Փանոս Թերլեմեզյանը, որն ավարտել է Պետերբուրգի գեղարվեստը խրախուսող ընկերության դպրոցը և ուրիշներ: Մայրաքաղաքի գեղարվեստների բարձրագույն գեղարվեստական ուսումնարանի ճարտարապետության բաժինն է ավարտել մեծն Ալեքսանդր Թամանյանը, իսկ Ռաֆայել Իսրայելյանն ավարտել է Լենինգրադի գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ինստիտուտը: Պետերբուրգում են մասնագիտական կրթություն ստացել ճարտարապետներ Գաբրիել Տեր-Միքելովը (ավարտել է Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետը), Քրիստափոր Տեր-Սարկիսովը (ավարտել է Պետերբուրգի կայսերական գեղարվեստական ակադեմիայի ճարտարապետական ֆակուլտետը), Պողոս Զոհրաբյանը (ավարտել է մայրաքաղաքի քաղաքացիական ինժեներների ինստիտուտը), Վարգան Սարկիսովը (Քաղաքացիական ինժեներների ինստիտուտ). Նրանք գործել են հիմնականում Հայաստանից դուրս՝ Մոսկվայում, Թիֆլիսում և Բաքվում: Տեր-Մելիքովի աչքի ընկնող գործերից է Ցալթայի հայկական եկեղեցին՝ կառուցված 1905–1909 թթ.: Հայկական այս եկեղեցին իր ծավալային և ճարտարապետական ձևերի հարստությամբ ու բարձրադիր տեղադրությամբ XX դարասկզբի հայկական եկեղեցական ճարտարապետության լավագույն կոթողներից մեկն է[11]: Քրիստափոր Տեր-Սարկիսովի նախագծերով են կառուցվել Թիֆլիսի վրաց ազնվականական ակումբի և Սուխումիի թատրոնի շենքերը, փոխարքայի գրասենյակը (ներկայիս Վրաստանի ԳԱ նախագահության շենքը): Թիֆլիսում և Վրաստանի այլ բնակավայրերում (Աբաստուման, Բորժոմ, Բակուրիանի, Գագրա) ճարտարապետ Պողոս Զոհրաբյանի նախագծերով կառուցվել է տարբեր բնույթի ու ծավալի 36 շենք: Զոհրաբյանի (Զուրաբովի) նախագծած ու կառուցած շենքերից հիշատակելի են Նոր վեհարանի և մատենադարանի շենքերը Էջմիածնում և առաջին հիվանդանոցի շենքերը Երևանում[12]: Ճարտարապետ Վարգան Սարկիսովի

---

[11] Է. Ա. Տիգրանյան. Ճարտարապետ Գաբրիել Տեր-Միքելյան.– «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 62–63:

[12] Գ. Ծ. Շիրմազանյան. Նոր Վեհարանը.– «Էջմիածին», 1963, Ա, էջ 43–46:

մասնակցությամբ ու նախագծերով են կառուցվել «Մետրոպոլ» հյուրանոցի և Պոլիտեխնիկական թանգարանի շենքերը Մոսկվայում:

Պետերբուրգի բուհերն են ավարտել ճանաչված երկրաբան Անդրեաս Արծրունին (Պետերբուրգի համալսարան), նշանավոր տնտեսագետ Ստեփան Գյուլիշամբարովը (Պետերբուրգի տնտեսագիտական ինստիտուտ), պատմաբան, բանասեր Կարապետ Եզյանը (Պետերբուրգի համալսարան), հայագետ Կարապետ Կոստանյանը (Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետ), գրականագետ և արվեստաբան Գարեգին Լևոնյանը (Պետերբուրգի գեղարվեստների ակադեմիա), իրավաբան և պատմաբան Խաչիկ Սամուելյանը (Պետերբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետ), բանասեր և լեզվաբան Ստեփան Մալխասյանը (Պետերբուրգի համալսարանի արևելյան ֆակուլտետի հայ-վրաց-պարսկական բաժինը), պատմաբան, բյուզանդագետ, բանասեր Նիկողայոս Ադոնցը (Պեաերբուրգի համալսարանի արևելյան լեզուների և պատմաբանասիրական ֆակուլտետները), որը 1903–1904 թթ. խմբագրել է «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսը, գրականագետ Արսեն Տերտերյանը (Պետերբուրգի նյարդահոգեբանական ինստիտուտ), նշանավոր դիտնականներ Օրբելի եղբայրները՝ մեծ ֆիզիոլոգ, էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի հիմնադիրներից մեկը՝ Լևոն Օրբելին (Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիա), հայագետ, արևելագետ Հովսեփ Օրբելին (Պետերբուրգի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետ), ստորջրյա հնագիտության հիմնագիր Ռուբեն Օրբելին (Պետերբուրգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետ), աշխարհահռչակ աստղաֆիզիկոս Վիկտոր Համբարձումյանը (Լենինգրադի համալսարան) 1928–1931 թթ. սովորել է ՍՍՀՄ ԳԱ Պուլկովյան աստղադիտարանի ասպիրանտուրան, նշանավոր Ալիխանյան եղբայրները և շատ ուրիշներ:

Պետերբուրգը կրթել է հայազգի նշանավոր ռազմական գործիչներ, որոնցով հպարտացել են հայ ժողովուրդը և բովանդակ Ռուսաստանը: Նրանցից են՝ հեծելազորի գեներալ, գեներալ-ադյուտանտ, Ռուսաստանի պետական և ռազմական գործիչ Լորիս Մելիքովը (սովորել է Պետերբուրգի հեծելազորի յունկերների գպրոցում), գեներալ-լեյտենանտ Ռոստոմ Բեհբութովը (ռազմական պատրաստություն է ստացել Պետերբուրգի Պրեոբրաժենսկի գնդում), գեներալ-լեյտենանտ Հակոբ Ալխազովը (ավարտել է երկրորդ կադետական կորպուսը), նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովը (սովորել է Պետերբուրգի Գարգեմարինյան ծովային դասընթացներում): Կադետական առաջին կորպուսն է ավարտել ռուս-ֆրանսիական 1806–1807 և ռուս-թուրքական 1809–1811 թթ. պատերազմական գործողությունների (ճակատամարտերի), 1812 թ. Հայրենական պատերազմի և ռուսական բանակի 1813–1814 թթ. արտասահմանյան արշավանքների մասնակից գեներալ-մայոր Դմիտրի Իվանովիչ Ախշարումովը: Նա առաջինն է անգրադարձել 1812 թ. պատերազմի պատմությանը («1812 թ. պատերազմի պատմության ակնարկ», 1813, ռուսերեն): Նա է 1826–1837 թթ. կազմել ռուսական զինվորական օրենքների առաջին հավաքածուն, որը հրատարակվել է 1838 թ.:

Պետերբուրգը անանց հետք է թողել հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման վրա: Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացվելուց հետո հայ հասարակական մտքի շատ ներկայացուցիչներ ոչ միայն արձագանքում էին ռուսական քաղաքական կյանքում կատարվող իրադարձություններին, այլև աչքի ընկնող դեր էին խաղում ժամանակի համառուսաստանյան հեղափոխական շարժումների մեջ: XIX դ. 40-ական թվականներին այդօրինակ հայերից էր ուտոպիստ-սոցիալիստ, գրող, բժիշկ Դմիտրի Դմիտրևիչ Ախշարումովը, որը 1846 թ. ավարտելով Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետը, անդամագրվում է Պետրաշևականների խմբակին և դառնում Ռուսաստանի ուտոպիստ-սոցիալիստական շարժման նշանավոր դեմքերից մեկը: Դ. Դ. Ախշարումովը 1812 թ. Հայրենական պատերազմի ակտիվ մասնակից և այդ պատերազմի առաջին պատմագիրներից մեկի գեներալ-մայոր Դ. Ի. Ախշարումովի որդին էր, ազնվական, շատ ունևոր ընտանիքից: Բայց դա, ինչպես ժամանակին դեկաբրիստներին, ետ չպահեց նրան հեղափոխական դառնալուց: Դ. Դ. Ախշարումովի աշխարհայացքը ձևավորվեց դեկաբրիստների, Գերցենի, Բելինսկու գաղափարների ազդեցության տակ, «արևմտականների» և սլավոնաֆիլների միջև մղված պայքարի գործընթացում: Պետրաշևականների վրա ուժեղ էր նաև արևմտյան ուտոպիստ-սոցիալիստների, մասնավորապես Շարլ Ֆուրյեի ուսմունքի ազդեցությունը: Դ. Դ. Ախշարումովն այն ռադիկալ գործիչների հետ էր, որոնք կազմեցին պետրաշևականների ձախ հեղափոխական-դեմոկրատական թևը, որոնց գաղափարախոսությունը կարգանում էր նախամարքսյան առաջավոր մատերալիզմի ազդեցության ներքո: Պետրաշևականների հեղափոխական-դեմոկրատական թևին պատկանող Ախշարումովը գրականության և գեղագիտության հարցերում Վ. Բելինսկու հետևորդն էր և իր ընկերների հետ ծրագրել էր տպագրել և տարածել նրա նշանավոր նամակը Գոգոլին:

Պետրաշևականների հեղափոխական-դեմոկրատական թևի բաղձանքն էր տեսնել Ռուսաստանում ճորտատիրության վերացման և բացարձակ միապետության վախճանը: Այդ նպատակին հասնելու համար, ոգևորված Արևմտյան Եվրոպայի 1848–1849 թթ. հեղափոխություններով, նրանք ծրագրում էին ստեղծել մի նոր հեղափոխական, մարտունակ դաղտնի կազմակերպություն և ցարիզմի դեմ նետվել վճռական պայքարի: Սակայն նրանց չհաջողվեց իրագործել իրենց այդ մտադրությունը, քանզի 1849 թ. ապրիլին ոստիկանությունը հայտնաբերեց պետրաշևականների խմբակը և Նիկոլայ Առաջինը դաժան դատաստան տեսավ նրա պեկավար գործիչների, այդ թվում Դմիտրի Ախշարումովի նկատմամբ: Այսպիսով, Դ. Ախշարումովը Խ. Աբովյանից հետո հայ այն գործիչներից էր, որը հայ հասարակական-քաղաքական միտքը կամրջում էր ռուսական իրականության մեջ XIX դ. 40-ական թվականներին գործող ամենահեղափոխական կազմակերպություններից մեկի պետրաշևականների հեղափոխական-դեմոկրատական թևի գաղափարների հետ:

Ասում ենք Աբովյանից հետո, քանի որ Դորպատի համալսարանի ավարտական տարում և հայրենիք վերադառնալուց առաջ Աբովյանի այցելությունները Պետերբուրգ և նրա խոհերը հաստատում են մայրաքաղաքի

հեղափոխական ընդհատակի հետ ունեցած դաղտնի կապերի մասին: 1834 թ. դեկտեմբերին Աբովյանը մեկնում է Պետերբուրգ, որտեղ նախատեսված երկուսի փոխարեն մնում է ավելի քան հինգ շաբաթ[13] և բուռն գործունեություն ծավալում այնտեղ: Մայրաքաղաքում Աբովյանը հրապարակային ելույթ է ունենում ժամանակի ազդեցիկ մարդկանցից բաղկացած հասարակության առաջ[14], հոդվածով հանդես գալիս տեղի գերմաններեն լույս տեսնող թերթում[15], շրջաբերական նամակներ է գրում և որպես նոր տարվա շնորհավորագրեր ուղարկում պետերբուրգաբնակ հայ մեծատուններին, կոչ անում նրանց նպաստել հայ ժողովրդին լուսավորելու իր ձգտումներին, այցելություններ կատարում զանազան անձանց և այլն: Այս բոլորը կատարելու համար, ժամանակի իմաստով, Աբովյանից մեծ խիզախում է պահանջվել: Եվ պատահական չէ, որ Պետերբուրգում եղած ժամանակաընթացքում նա անընդհատ փոխել է իր բնակարանը[16], որը նշանակում է, որ նա խախտել է մայրաքաղաք ժամանողների համար պարտադիր մեկ օրվա ընթացքում գրանցվելու ընդունված կարգը: Եվ Աբովյանի այն վկայությունը, թե այդ տեղափոխությունները կատարել է տանտերերի հետ շփումներ ունենալու անհրաժեշտությունից, և որ այդ տեղափոխումների պատճառով նա վնասներ և ամեն տեսակ անհարմարություններ է կրել, նշանակում են, որ Աբովյանը մեծ զգուշությամբ է գործել Պետերբուրգում: Այդ մասին կա նաև ուղղակի վկայություն: 1835 թ. հունվարի 21-ի նամակում Ստ. Նազարյանը Աբովյանին գրել է. «Ինձ շատ դուր է գալիս քո գործակատարության զգույշ ընթացքը»[17]: Այդուհանդերձ, Աբովյանի զգուշավորությունը նրան չի փրկել երրորդ բաժանմունքի տեսադաշտ ընկնելուց: Այս առումով չափազանց ուշագրավ է նրա հրապարակային ելույթի մեջ շոշափված հարցերի արձագանքը երրորդ բաժանմունքի գործակալ Բուլգարինի խմբագրած ցարասլաշտ "Северная пчела" պարբերականում:

1835 թ. Պետերբուրգում անցկացրած օրերին Ռուսաստանի մայրաքաղաքը Աբովյանի վրա անջնջելի տպավորություն է թողել: Դա վերաբերում էր ոչ թե մեծ քաղաքից ստացած նրա տպավորությանը, այլ մեծ մասամբ նրա մտավոր կյանքում կատարված բեկմանը: Պահպանվել են Պետերբուրգից Աբովյանի գրած երկու անավարտ նամակները, որոնցից մեկը հենց այդպես էլ սկսել է դրել. «Յուրաքանչյուրի համար հետաքրքիր է ծանոթանալ այսպիսի մի խոշոր մայրաքաղաքի կյանքին... և եթե մարդ դատելու լինի այն բանի հիման վրա, ինչ սովորաբար տեսնում է փողոցում, ապա հեշտությամբ կկանգնի մարդկանց մասին սխալ դատելու վտանգի առջև»[18]: Ինչպես նույն օրերին Պետերբուրգից Աբովյանի գրած մյուս նամակները, սա ևս քողարկված ոճով է գրված. նա հասցեատիրոջը հասկացրել է, որ ինքը մայրաքաղաքին ծանոթացել է ոչ թե արտաքնապես, այլ

---

[13] Խաչատուր Աբովյան. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ). հ. 10, Երևան, 1958, էջ 176:

[14] Նույն տեղում, հ. 8, 1958, էջ 306–311:

[15] Նույն տեղում, հ. 7, 1958, էջ 33–35:

[16] Նույն տեղում, հ. 10, էջ 176:

[17] Դիվան Խաչատուր Աբովյանի. հ. 1, Երևան, 1948, էջ 250:

[18] Խ. Աբովյան, ԵԼԺ, հ. 10, էջ 173–174:

ըստ էության, որ Պետերբուրգում իր ուշանալու գլխավոր պատճառը եղել է մարդկանց հետ շփումներ և մտքերի փոխանակություններ ունենալը: Պարզ է ինքնին, որ Աբովյանը պետք է շփումներ և մտքերի փոխանակումներ ունենար այնպիսի անձանց հետ, որոնք հասարակական-քաղաքական հայացքներով համախոհ էին Աբովյանին, որը հայրենիք վերադառնալուց հետո, որպես բաժանորդ, ստանալու էր "Отечественные записки" *ամսագիրը, ուր ռուսական քննադատության բաժինը 1839–1846 թթ. ղեկավարում էր հեղափոխական-դեմոկրատ Վ. Բելինսկին: Իրեն համախոհ անձնավորություններից ստացած անջնջելի տպավորությունների մասին են վկայում նաև Ժուկովսկուն գրած Աբովյանի հրաժեշտի հետևյալ տողերը. «Այսօր, գուցե, վերջին անգամ իմ կյանքում անցա Ձմեռային պալատի մոտով: Ջերմ արցունքները, որ հոսեցին իմ աչքերից, արդասիք էին այն չքնաղ հուշերի, որ այնքան շատ հիանալի պատկերների հետ ձեր թանկագին պատկերներն էլ հայրենիք եմ տանում, որպես կյանքիս ուղեցույց»*[19]*: Աբովյանի նամակում ակնարկված պետերբուրգյան նոր ծանոթությունները, իր համար կյանքի ուղեցույցի արժեք ունեցող մարդկանց հետ տեսակցելը նրան չլքեցին ամբողջ գործունեության ընթացքում:*

Խ. Աբովյանի սկսած գործը որակական նոր բարձունքի հասցրեց հայ հեղափոխական դեմոկրատիայի պարագլուխ Միքայել Նալբանդյանը: Պետերբուրգի համալսարանի արևելագիտության ֆակուլտետում 1860 թ. պաշտպանելով թեկնածուական դիսերտացիա, այնուհետև Նալբանդյանը մայրաքաղաքի հետ կապվեց հեղափոխական ընդհատակյա գործունեությամբ: 1862 թ. մայիսին նա Պետերբուրգում մասնակցեց Ն. Չերնիշևսկու և Ն. Սեռնո-Սոլովևիչի գլխավորած "Земля и воля" *կազմակերպության ընդհատակյա գործունեությանը: 1862 թ. հուլիսի 14-ին Նալբանդյանը ձերբակալվում է «լոնդոնյան սլրոսլագանդիստների» հետ կապեր ունենալու համար և բանտարկվում Պետերբուրգի Պետրոպավլովյան ամրոցի Ալեքսեևյան ռավելինում, որտեղ գտնվում էին նաև Ն. Չերնիշևսկին, Ն. Սեռնո-Սոլովևիչը և* "Земля и воля"*-ի մյուս անդամները*[20]*:*

Հայերը գործուն մասնակցություն են ունեցել Պետերբուրգում սկիզբ առած նարոդնիկական շարժմանը: 1870–1880-ական թվականներին Պետերբուրգի նարոդնիկական խմբակների անգամ են եղել Կոստանդին Մամիկոնյանը (գործուն մասնակցություն է ունեցել "Земля и воля" *նարոդնիկական օրգանի հրատարակմանն ու տարածմանը), Օ. Քանանյանը (Պետերբուրգում ստեղծված «Կովկասցիներ» նարոդնիկական խմբակի կազմակերպիչներից), Հովհ. Մանուչարյանը (Պետերբուրգում* "Народная воля"*-ի 1880-ական թվականների ականավոր գործիչներից մեկը) և ուրիշներ: Նարոդնիկական շարժման ջախջախումից հետո հայ նարոդնիկների մի մասը հարեց նոր ձևավորվող ազգային բուրժուական կուսակցություններին, ոմանք էլ՝ ռուսական սոցիալ-դեմոկրատիային: 1880-ական թվականներից Ռուսաստանում կազմակերպվում են մարքսիստական խմբակ-*

---

[19] *Նույն տեղում, էջ 191:*

[20] *Աշ. Հովհաննիսյան. Նալբանդեանը և նրա ժամանակը. գ. I, Երևան, 1955, գ. II, Երևան, 1956: Տե՛ս նաև՝* С. Дарон я н. Микаэл Налбандян. М., 1963.

ներ: 1895 թ. Պետերբուրգում հիմնադրված «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» կազմակերպությունում իրենց հեղափոխական մկրտությունն ստացան Բոգդան Կնունյանցը, Արշակ Զուրաբյանը, Հովհ. Մելիք-Հովսեփյանը և ուրիշներ: Պետերբուրգի գլխավոր շտաբի Նիկոլաևյան ակադեմիան է ավարտել գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին, որը մասնակցել է ռուս-ճապոնական և Առաջին համաշխարհային պատերազմներին, որպես գնդի հրամանատար: Նա Ժամանակավոր կառավարության ժամանակ եղել է Պետրոգրադի օկրուգի գլխավոր շտաբի պետը, ապա՝ գլխավոր հրամանատարը: Բագրատունին միաժամանակ Պետրոգրադի հայկական զինվորական կոմիսարն էր: Նա մեծ աշխատանք է կատարել հայ զինվորներին Կովկասյան ճակատ տեղափոխելու, թուրքական զավթիչներից Արևելյան Հայաստանի տարածքները, ինչպես նաև Բաքուն պաշտպանելու գործում:

Հայերը գործուն մասնակցություն են ունեցել Պետրոգրադում Հոկտեմբերյան հեղափոխության իրականացմանը և խորհրդային կարգերի ամրապնդմանը: Նրանցից էին Լ. Կարախանը (Պետրոգրադի ռազմահեղափոխական կոմիտեի անդամ), Մ. Տեր-Հարությունյանցը (Պետրոպավլովյան բերդի կոմիսար), Հովհաննես Իսակովը (մարտնչել է Ցենտրբալթում), Մ. Մարտիրոսյանը, Տ. Ալեքսանյանը, Ա. Վերմիշևը, Ս. Բաբախանյանը, Գ. Խախանյանը և ուրիշներ, որոնք մասնակցել են Ձմեռային պալատի գրոհին:

Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, հայ ժողովրդի զավակները հերոսաբար պաշտպանեցին Լենինգրադը (ոչ միայն բնիկ լենինգրադահայերը) և բոլոր ջանքերը գործադրեցին քաղաքի շրջափակման վերացման, Լենինգրադյան ցամաքում, ջրում և օդում հիտլերյան զավթիչների վերջնական պարտությունն արագացնելու համար: Լենինգրադի 1941–1944 թթ. ճակատամարտի ժամանակ Բալթիական նավատորմի ռազմական գործողությունները ղեկավարում էր ՍՍՀՄ նավատորմի ծովակալ, Սովետական Միության հերոս Հովհ. Իսակովը: Սովետական Միության կրկնակի հերոսի կոչման արժանացավ «Լենինգրադի արծիվը» կործանիչ օդաչու Նելսոն Ստեփանյանը: 1942 թ. դեկտեմբերի 4-ին Պուլկովյան բարձունքների ծանր մարտերում զոհվեց գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը: Լենինգրադի պաշտպանության օրերին մեծ սխրանքներ կատարեցին հայ օդաչուներ Լ. Զափչախյանը, Մ. Դավթյանը, Ն. Սազաթելյանը, Գ. Պետրոսյանը, Ա. Ափինյանը, Ն. Սարգսյանը, Ա. Խաչատուրովը, նավաստիներ՝ Վ. Ակոպովը, Մ. Աղաջանյանը, Դ. Մկրտչյանը, սուզանավի մարտական մասի հրամանատար Հ. Հովակիմյանը: Խիզախությամբ աչքի ընկան հրետանու հրամանատարներ Ս. Հարությունյանը, Ս. Նարինյանը, Ա. Սարգսյանը, Գ. Բաղդասարյանը, Վ. Հարությունյանը, տանկի հրամանատար Ե. Ավետիսյանը: Լենինգրադի պաշարումը ճեղքելու պատմական փաստաթղթի տակ ստորագրել են Երևանի Կիրովյան կուսշրջկոմի նախկին առաջին քարտուղար, գումարտակի հրամանատար Հ. Մելքոնյանը և ռոստովցի հայ Ք. Կալուգովը: Ծանր պայմաններում սլետական կարևոր առաջադրանքներ էր կատարում նավատորմի ջրային տեղամասի սլետ Խ. Մամյանը: Բժշկության բնագավառում աչքի ընկան Ս. Կարճիկյա-

նը, Ա. Կյուչարյանցը: Լենինգրադի հերոս պաշտպանների շարքերում էին Էրմիտաժի դիրեկտոր, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, ՍՍՀՄ Ժողովրդական արտիստ Վահրամ Փափազյանը, դերասանուհի Ա. Գաբրիելյանը և ուրիշներ: Մի ժամանակաշրջան էր դա, երբ առաջնային բնագծում տիրական էր հոգու և սրտի դաշինքով կռված մի կարգախոս. պաշտպանելով Լենինգրադը՝ պաշտպանում ես քո հայրենիք Հայաստանը:

Հիրավի. Պետերբուրգը հայոց կյանքում մեծ դեր է խաղացել և հայերն ամեն հնարավորն արել են քաղաքի բարօրության համար: Պետերբուրգը հայոց համար այսօր էլ շատ հարազատ քաղաք է՝ ռուսական ոգու իր խորությամբ և սրտագին հյուրընկալությամբ:

РОЛЬ С.-ПЕТЕРБУРГА В ЖИЗНИ АРМЯН

НОРАЙР САРУХАНЯН.

Резюме

Русские власти проявляли доброжелательное отношение к эмиграции армян в Санкт-Петербург. Примечательно, что спустя всего семь лет после основания Петербурга, в 1710 году, здесь уже создается армянская община. В 30-х годах XVIII века в Петербурге уже существовала "Армянская улица". В течение XVIII—XX веков Петербург продолжал играть важную культурно-просветительную и научную роль в жизни армянского народа.